Արձանագրություն 3

«ԳՀԱՊՁԲ-ՔՆՁ-ՁԻԱՀ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ձևով քիմիական նյութերի ձեռքբերման գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի

Անցկացման վայրը՝ ք.Երևան, Աճառյան 2, «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ, 2-րդ հարկ, 207 սենյակ
Անցկացման օրը՝ 28 օգոստոսի 2018թ.
Անցկացման ժամը՝ 11:30
Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Արշակ Պետրոսյան
Հանձնաժողովի անդամներ՝	Գայանե Սայադյան
	Սիրանուշ Մնացականյան
	Լիլիթ Հովհաննիսյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Սոֆիա Գրիգորյան

Բացակայում էր հանձնաժողովի անդամ Կարինե Հարությունյանը:

I. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման մասին

(նախագահ՝ Արշակ Պետրոսյան)

Ընդունել ի գիտություն, որ

1.1 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե առաջին տեղն զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ հարցում ուղարկելուց հետո սահմանված ժամկետում (22.08.2018թ.) ստացել ենք եզրակացություն, համաձայն որի մասնակիցներ՝ «Պրոմ-տեստ» ՍՊԸ-ն և «Պրոֆտեստ» ՍՊԸ-ն չունեն ժամկետանց հարկային պարտավորություններ և մասնակիցների կողմից ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող:

1.2 Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի ներկայացված փաստաթղթերի գնահատման

թերթիկները, համակարգողն ամփոփեց ընթացակարգի մասնակցի հայտի գնահատման արդյունքները, ինչն արտացոլված է ստորև ներկայացված աղյուսակում.

N h/h	Գնահատման չափանիշը	Գնահատման արդյունքը	
		«Պրոմ-տեստ» ՍՊԸ	«Պրոֆտեստ» ՍՊԸ
1.	Որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր	համապատասխանում է	համապատասխանում է
Ընդհանուր գնահատականը		**համապատասխանում է**	**համապատասխանում է**

Հանձնաժողովը որոշեց.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի պահանջների համաձայն, «Պրոմ-տեստ» ՍՊԸ-ի և «Պրոֆտեստ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը գնահատել բավարար և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին հայտարարել ընտրված մասնակիցներ՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով.

- N 2 չափաբաժնի համար «Պրոֆտեստ» ՍՊԸ -ին:
- N 3 չափաբաժնի համար «Պրոմ-տեստ» ՍՊԸ -ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

II. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

(նախագահ՝ Արշակ Պետրոսյան)

2.1 Հանձնաժողովը որոշեց.

ա) ընտրված մասնակիցների հետ պայմանագրեր կնքել Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը էլեկտրոնային ձևով գնումների գործընթացի բոլոր մասնակիցներին ուղարկելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը **(30.08.18թ. մինչև 03.08.18թ.)**:

բ) հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ՝	Ա.Պետրոսյան	_____ (ստորագրություն)
Հանձնաժողովի անդամներ՝	Գ.Սայադյան	_____ (ստորագրություն)
	Ս.Մնացականյան	_____ (ստորագրություն)
	Լ.Հովհաննիսյան	_____ (ստորագրություն)
Հանձնաժողովի քարտուղար՝	Ս.Գրիգորյան	_____ (ստորագրություն)